ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 37
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

Երևան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի N 4/2 հասցեում գտնվող 01-006-0619-0013 կադաստրային ծածկագրով 0.23814 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կոմունալ ենթակառուցվածքների հողեր (ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության)	Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի N 4/2 հասցեում գտնվող 01-006-0619-0013 կադաստրային ծածկագրով 0.23814 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրված.

- «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կարծիքը (կցվում է)՝ «նշված հասցեում գտնվող հողամասի հարակից ճանապարհի հակառակ մայթով անցնում է միջին ճնշման Դ-76 մմ տրամագծի վերգետնյա գազատարը և կառուցապատման աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նշված հանգամանքը: Կից գծապատկեր (կցվում է):»,
- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կարծիքը (կցվում է)՝ «նշված տարածքով անցնում է «Ծիծեռնակաբերդ» 110/6 կՎ ենթակայանի բջ.29-ՏԵ81936 կՎ լարման ստորգետնյա մալուխային գիծը, տարածքում որևէ գործունեություն իրականացնելու

համար անհրաժեշտ է «ՀԷՑ» ՓԲ ընկերության հետ համաձայնեցված տեղափոխել մալուխագիծը:»:

4. Երևան քաղաքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Երևան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Հ.Դավթյան

Երևան, «10» «փետրվարի» 2022 թ.